ԿԱՅԾՈՆ ԱՄՐՈՑԸ

Գ. Ս. ՇԱԽԿՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի կարևոր, սակայն չուսումնասիրված ամրոցներից է Կայծոնը՝ պատմական Գուգարաց նահանգի Զորոփոր գավառում։ Հանդիսանալով միջնադարյան Հայաստանի աչքի ընկնող պաշտպանական հենակետերից մեկը, Կայծոնը Կայան, Լոռի, Գագ, Ախթալա և այլ ամրոցների ու բերդերի շարքում կարևոր դեր է խաղացել Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների անվտանգության, կենտրոնական Հայաստանից Գուգարքով դեպի Վրաստան տանող ճանապարհի մատույցների պաշտպանության գործում։

Ամրոցի շինարարության ժամանակին վերաբերող ամենավաղ տեղեկությունը, որ հանդիպում է հայ մատենագրության մեջ, պատկանում է XIII դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցուն, որը խոսելով Գրիգոր Մագիստրոսի մասին, գրում է. «Սա է որդին Հոլում Վասակայ՝ շինողին Բջնոյ, Կայենոյ և Կայծոնոյ»[1]։

Պատմական աղբյուրներից իմացվում է, որ Կայծոնը մի շարք այլ բերդերի թվում պատկանել է Բագրատունիների Կյուրիկյան շառավիղներին։ Ինչպես հիշատակում է Վարդան պատմիչը, Աշոտ Ողորմածի մահից (977 թ.) հետո նրա կալվածքները բաժանվում են երեք որդիների՝ Սմբատի, Գագիկի և Գուրգենի միջև. «... և կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սեւորդւովքն Զորոյգետին. և զԿայեն և զԿայծոն, զխորխոռունիք՝ որ 'ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերա, և զԲազունիք՝ որ է Բազկերտ 'ի գաւառն Տաշրայ. և այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սոմխէթ կոչեն»[2]։

Գագիկ I-ի (990—1020) մահից հետո նրա ավագ որդուն՝ Հովհաննես Սմբատին (1020—1041/1042) բաժին է ընկնում «... զԱնի և զՇիրակ, զսուրբ Գրիգոր Զորովն Աշոցաց, զԱնբերդ և զդաշտն Այրարատեան, զԿայեան և զԿայծոն և զՏաւուշ դաւառն Սեւորդեաց»[3]։

Կայծոն ամրոցի տերերի շարքում հիշվում է նաև Գրիգոր Մագիստրոսը (990—1058/1059), որն իր իշխանության կենտրոն ունենալով Բջնի ամրոցը, տեր է դառնում նաև Կայան և Կայծոն բերդերին։ Սակայն Գրիգոր Մագիստրոսը երկար չի իշխում. նեղված սելջուկների արշավանքից, նա 1044 թ.[4], ինչպես նշում է Վարդան պատմիչը, «... տայ զԲջնի 'ի Մոնոմախն,

---

1 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58—59։

2 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 90։ Տե՛ս նաև «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 122։

3 Վարդան, Հաւաքումն պատմութեան, էջ 92։

4 Հ. Մանանդյանի մոտ՝ 1045 կամ 1046 թ. (տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Գ, Երևան, 1952, էջ 405)։

և զԿայեան և զԿայծոն, զոր ընդ ձեռամբ իւր ունէր, և առնու զդքսութիւնն Միջագետացն»[5]։

1063 թ. գրված մի վավերագրից իմացվում է, որ Կայծոնը՝ մի շարք այլ բնակավայրերի և բերդերի հետ, նվիրված է եղել Հաղբատի վանքին. «... և մեր հայոց ազգքս ետուք սրբոյ Նշանին Հաղբատայ վիճակն Աղուանից Տայօղն, Գօրականն, Զորագեղն, Կայեանն, Կայէծօնն, Աղէստաֆէն, Խօջաբազարն, Մահկանն, Գաքէն, Շամքօրն, Շաքեն...»[6]։

Սելջուկ-թուրքերը սուլթան Ալփ-Արսլանի գլխավորությամբ 1064—1065 թթ. գրավեցին Հայաստանի զգալի մասը, այդ թվում՝ Գուգարքը, որը նրանց ձեռքում մնաց մինչև 1118—1123 թթ., երբ վրաց թագավորությունը, Դավիթ Շինարարի օրոք հզորանալով, խլեց այն սելջուկներից և միացրեց Վրաստանին։ XIII դարի Անանուն վրացի պատմիչի վկայությամբ, Թամար թագուհին (1184—1213) Իվանե Զաքարյանին արքունի մեծ վեզիր նշանակելիս նվիրում է նրան մի շարք քաղաքներ և բերդեր, որոնց թվում՝ Կայծոն ամրոցը. «Ողորմած լինելով հավատարիմների և յուրայինների հանդեպ՝ [Թամար թագուհին]... շնորհեց՝ Սարգսի որդի Հովհաննին (Իվանեին) առաջնություն և գործակալի (մսախուրթուխուցեսի) պաշտոնը և ի պատիվ՝ Կայենն ու Կայծոնը, Գեղարքունիքով և այլ բազում հարկատու քաղաքներով, բերդերով ու երկրներով...»[7]։ Գեղարդի արձանագրություններից մեկում ևս նշվում է, որ Իվանեի տիրապետության սահմանները տարածվում էին «առ ի Կայենով եւ Կայծոնով մինչև [ի Բարկուշատ եւ մինչ] ի Յականա եւ մինչ ի Նախճաւան եւ անդի մինչ ի Կարս...»[8]։

XIII դարի առաջին կեսին թաթար-մոնղոլների ասպատակությունները կասեցրին երկրի տնտեսական-մշակութային զարգացումը և պատճառ դարձան բնակչության զանգվածային արտագաղթի։ Առանձնապես տուժեցին այն գավառները, որոնք գտնվում էին Զաքարյանների տիրապետության տակ։ Պետք է ենթադրել, որ այդ ժամանակ Կայծոն ամրոցն արդեն կորցրել էր իր երբեմնի պաշտպանական-հենակետային նշանակությունը, քանի որ դրանից հետո ամրոցի այդօրինակ դերի վերաբերյալ հիշատակություններ չեն հանդիպում։

Հայաստանի հյուսիսային շրջանները, այդ թվում Կայծոն-Շնողը, հետագա դարերում ևս բազմիցս ենթարկվել են ասպատակությունների։ Հատկապես ավերիչ են եղել լեզգիների ալարբերական արշավանքները XVIII դարի երկրորդ կեսին, որոնց վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ կան աղբյուրներում։ Դրանցից մեկի մասին Ռ. Երզնկյանցը գրում է. «Ծերունիք մեր դեռ ևս յիշեն ղամեհի արձակումն Օմար-խանին Աւարիոյ ի 1772 ամի 30000 հատընտիր լեկզի զօրօք, որ ոտնակոխ արարեալ զՎրաստան և զբոլոր նահանգս Բօրչալուի... ապա խուռն բազմութեամբ ասպատակ սփռեալ ի Զորագետն ի վեր, գերի արարեալ զբազմութիւնս ժողովրդոց էած ի Դաշրս-

[5] Վարդան, էջ 99։

[6] «Լումա», գիրք Ա, 1898, Տփղիս, էջ 263։

[7] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, Երևան, 1936, էջ 13։

[8] Ի. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 192 (հմմտ. Ղ. Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 340, տողատակում)։

տան»[9], նույնանման աղբերգության մասին, այս անգամ պարսից Աղա Մահմեդ խանի կողմից 1795—1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակ, հիշատակում է Վարդան Օձնեցին[10]։

Վրաց Գեորգի թագավորը Աղա Մահմեդ խանի հրոսակներից խույս տված և Վրաստանին տպավինած Ղարաբաղի մելիքներին, 1799 թ. ռուսաց կայսեր հրովարտակի համաձայն, շնորհում է մի շարք գյուղեր, որոնց թվում և Շնողը[11]։

Ամրոցը ուշ շրջանում հիշվում է Սանահնի վանքի առաջնորդ Հարություն Տեր-Բարսեղյանցին նվիրված մի հիշատակագրությունում, որ թվագրված է 1834-ով[12]։

Կայծոն ամրոցը առ այսօր ճարտարապետական և հնագիտական հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել։ Ամրոցի վերաբերյալ նկարագրական բնույթի համառոտ տեղեկություններ են հանդիպում XIX դարի և XX դարի սկզբի հեղինակների (Ս. Ջալալյանց, Մ. Բարխուդարյան, Գ. Երգնկյանց, Ե. Լալայան և ուրիշներ) ուսումնասիրություններում, որոնց մի մասը որոշ տվյալներ է պարունակում նաև ամրոցի պաշտպանական համակարգի և պահպանվածության վիճակի վերաբերյալ։ Նա տեղ է գտել Ալավերդու (ներկայիս Թումանյանի) շրջանի ճարտարապետական հուշարձանների ուղեցույցում[13], Հայաստանի պատմական հուշարձաններին նվիրված աշխատություններում[14], Կայծոն-Շնողի հնագիտական և ճարտարապետական հուշարձանների արժեքավորմանն է նվիրված Վ. Ավետյանի շահեկան հոդվածը[15]։

* * *

Կայծոն ամրոցը գրավելիս է եղել Շնող գյուղի ներկայիս տարածքի հյուսիս-արևմտյան մասի եռանկյունաձև հրվանդանը, որ տեղի խոսվածքով կոչվում է «Վենձ քարի գլուխ»։ Գյուղի ընդհանուր տարածքի նկատմամբ սա ունի իշխող դիրք (գծ. I)։ Ինչպես հայկական մյուս ամրոցների, այնպես էլ Կայծոնի բռնած տարածքն աչքի է ընկնում բնական պաշտպանական հուսալի և նպաստավոր պայմաններով, պարագծով եզերված է բարձր, մեծ մասամբ անմատչելի ժայռերով։ Հրվանդանը հյուսիս-արևմտյան երկարությամբ հարում է Դեբեդ գետի («Վենձ ջուր») կիրճին, հարավային կողմից Առվի ձորն

---

9 Ռոստոմ-Բեգ Երգնկյանց, Հնախոսական տեղագրություն Հաղբատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի, Վաղարշապատ, 1886, էջ 10։

10 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 70ա։

11 Տե՛ս Архиепископ Ованес, Карабагские мелики в Грузии с 1800 по 1808-й год, «Кавказская старина», № 1, 1872, Тифлис, էջ 36։ Ռ. Երգնկյանց, նշվ. աշխ., էջ 125։

12 Հիշատակագրությունը 1,8×0,2 մ չափերով մարմարե սալի վրա է, որը ներկայումս գտնվում է Սանահնի Ամենափրկիչ եկեղեցում։

13 Տե՛ս Հ. Ս. Եղիազարյան, Ալավերդու շրջանի կոլտուրայի հուշարձանները, Երևան, 1952, էջ 47—48։

14 Տե՛ս Թ. Գ. Ջուհարյան, Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները, Երևան, 1961, էջ 122։ Մ. Վ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 578—579։

15 Տե՛ս Վ. Վ. Ավետյան, Շնողը պետք է դառնա հնագիտական ուսումնասիրությունների առարկա, «Գիտական աշխատություններ. ՍՍՀՄ պատմություն» (Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ժողովածու), Երևան, 1972, էջ 113—134։

է՝ փոքրիկ գետակով, իսկ արևելյան կողմից շրջափակված է հեղեղատներից առաջացած ոչ խոր ձորակով։ Իր շրջագծով և բնական պաշտպանական համակարգով Կայծոնը շատ նման է Գառնիի, Անիի, մասամբ նաև Լոռի ամրոցներին։

Հրվանդանը եզերող ժայռերի տարբեր աստիճաններում կան դժվարամերձ քարայրեր, որոնց ապավինել են տեղի բնակիչները հարձակումների և



Գծ. 1

ավարառությունների ժամանակ։ Դրանցից մեկի՝ հարավային կողմի բարձրադիր քարափում գտնվող «Ռամազի էրի» վերաբերյալ Գ. Երզնկյանցը գրում է. «... ունի քարափի մեջ ցցած փայտե սեպեր, որոնց բռնելով և թև վրան կանգնելով, բարձրանալիս են եղել»[16]։ Ամրոցի տարածքը հատկապես անմատչելի է հարավ-արևմտյան և հյուսիսային կողմերից, որտեղ ուղղաձիգ, գահավեժ ժայռերն ունեն ավելի քան 35 մ բարձրություն։ Տափարակի չափը ամենաերկար մասում 580 մ է, ամենալայն մասում՝ 256 մ, մակերեսը կազմում է մոտ 6,5 հա։ Այն ունի ոչ մեծ թեքություն (3,5 տոկոսից էլ պակաս)՝ արևելք-արևմուտք ուղղությամբ։ Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 805—820,5 մ։ Ներկայումս տափարակը կառուցապատված է բնակելի տներով, հիմնականում շինված վերջին տասնամյակներում։

Կայծոն ամրոցի պաշտպանական կառուցվածքներից շատ քիչ բան է մեզ հասել։ Դրանք պարսպապատերի մնացորդներ են մոտ 10 մ երկարությամբ՝ ամրոցի տարածքի արևելյան անկյունաձև մասի երկու կողմերում (նկ. 1, լուսանկարված է 1938 թ., նեղատիվը պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում)։ Հյուսիսային կողմի մնացորդներն ունեն 3—3,5 մ, իսկ հարավային կողմինը՝ 1,5—1,8 մ բարձրություն (այստեղ պատի որոշ մասը վերաշարված է)։ Պատը տեղական բազալտ քարի

[16] Գ. Երզնկյանց, Հնություններ Հայրենյաց. Կայծոն կամ Շնող, «Արձագանք», 1895, № 30, էջ 3։

խոշոր անմշակ կտորներից է, կիկլոպյան տիպի (առանց շաղախի օգտագործման) միաշերտ շարվածքով։ Առանձնապես խոշոր են հյուսիսային կողմի քարերը, որոնց զգալի մասը ունի 1,0×0,9×1,2 մ չափեր։

Նման տիպի շարվածքը, բնորոշ լինելով նախաքրիստոնեական շրջանի կառուցվածքներին, միջնադարյան Հայաստանի ամրաշինության մեջ քիչ է հանդիպում։ Հնարավոր է, որ այդ մնացորդները գոյություն են ունեցել միջնադարից էլ առաջ, իսկ միջնադարում ներառվել են ամրոցի պաշտպանական համակարգի մեջ։ Հետաքրքիր է, որ վերջին տարիներին ամրոցի տարածքում և մերձակայքում ի հայտ են եկել բրոնզե և պղնձե իրեր, խեցեղեն, քարարկղային թաղումներ և այլն[17], որոնք վկայում են, որ այս վայրերը բնակեցված են եղել վաղնջական ժամանակներից։ Անշուշտ, վաղ է այդ մասին որոշակի խոսք ասել, քանի դեռ ամրոցի տարածքը չի ենթարկվել հնագիտական մանրաղնին ուսումնասիրության։



Նկ. 1

Նկ. 2

Գ. Երզնկյանցը նշում է, որ «ինչպես ավանդաբար պատմում են, Գրիգոր մագիստրոս Պահլավունին գաջ ու կրիա ամուր պարիսպ է կառուցել տվել, որի հաստությունը երկու արշինից ավելի է, ունեցել է կամարակապ ընդարձակ դուռ, կողքերին երկու մեծ աշտարակներ։ Բայց ափսո՜ս, որ այժմ գյուղացիք քանդել են թե՛ պարիսպը և թե՛ դուռը, քարը իրանց շինության վրա գործածելով, իսկ տեղերն էլ իրանց տների համար բռնելով. այժմ հենց այս թամքուցումն կան և շատ մեծությամբ թափված հին պարսպի շաղախներ»[18]։ Ինչպես պատերի մնացորդների շրջանում, այնպես էլ ամրոցի տարածքի այլ մասերում մեզ չհաջողվեց հայտնաբերել պարսպապատի շաղախի հետքեր։ Սակայն դա չի բացառում ամրոցի պատերում (հատկապես «կամարակապ» մուտքի և կողքի աշտարակների շարվածքում) շաղախի օգտագործման հանգամանքը։

Բացի վերևում նկարագրվածից, պարսպապատեր գոյություն են ունե-

---

17 Հայտնաբերված իրերի զգալի մասը կարելի է տեսնել Շնող գյուղի միջնակարգ դպրոցի հայրենագիտական թանգարանում։

18 Գ. Երզնկյանց, նշվ. աշխ., էջ 3։ Տե՛ս նաև Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 388։

ցել նաև Հրվանդանի այլ կողմերում[19], որոնց հետքերը, որ անցյալ դարի վերջերին «հազիվ նշմարելի են» եղել, ներկայումս վերացված են. տափարակը եզերող ժայռերը ամբողջությամբ մերկացված են, շատ տեղերում դրանք բնակիչների կողմից վերածվել են քարհանքի։

Ամրոցի հիմնական մուտքը գտնվել է արևելյան կողմում, որտեղ տափարակը նեղ պարանոցով միանում է գյուղի ընդհանուր տարածքին։ Այժմ էլ Թաղամասի բնակիչների շրջանում շատ գործածական է «բերդի դուռ» արտահայտությունը։ Տարեց շնողցիները հիշում են ամրոցի մուտքի երկու կողմերում աշտարակ-բուրգերի («բուրջ») և պարսպապատերի մնացորդները, որոնք եղել են մինչև 1900-ական թթ., երբ այդ մասերում ևս կառուցվել են բնակելի տներ։

Ամրոցի հիմնական մուտքի ընտրությունը կատարված է ռազմա-պաշտպանական խնդիրները, նաև բնական պայմանները վարպետորեն հաշվի առնելով, ինչպես Հայաստանի շատ ամրոցներում (Բառնի, Ամբերդ, Անի և այլն)։ Ճանապարհը, Հրվանդանին չհասած, թեքվում է հարավ և ընդհուպ մոտենալով ժայռերին (որոնց եզրագծով կառուցված են եղել պարսպապատերը), ուղղվում է դեպի Հրվանդան, դրանով իսկ հնարավորություն տալով ամրոցի պաշտպաններին շատ նպաստավոր դիրքերից, հենց ամրոցի մատույցներում դիմագրավել հակառակորդի ուժերին։ Հիմնական մուտքից բացի ամրոցն ունեցել է օժանդակ մուտք հարավային կողմից, որտեղ ժայռերը նվազ թեքությամբ իջնում են դեպի ձորը։ Ամրոցի ջրամատակարարման մասին որոշ տեղեկություններ հանդիպում են Գ. Երգնկյանցի մոտ[20]։ Տարբեր ժամանակներում ամրոցի տարածքում կամ դրանից դուրս հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են կավե խողովակներ։ Հաստատվում է այն ենթադրությունը, որ ամրոցը խմելու ջուրը ստացել է Ս. Սարգսի բլրի արևելյան կողմի («Խէչի եդի կրռան») ձորում բխող աղբյուրից, որը ներկայումս էլ գոյություն ունի։ Աղբյուրը գտնվում է ամրոցից բարձր տեղում, որը հնարավորություն է տալիս բլրի լանջով գցված կավե խողովակներով ջուրը ինքնահոսով հասցնել ամրոցի ցանկացած մասը։

Միջնադարյան Հայաստանի գրեթե բոլոր ամրոցները և բերդերը իրենց պաշտպանական համակարգում ունեցել են գաղտնուղիներ, որոնք ծառայել են ինչպես ջուր վերցնելու, այնպես էլ պաշարման ժամանակ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու նպատակով։ Այդ առումով Կայծոն ամրոցը բացառություն չի կազմել. մոտ մեկ տասնամյակ առաջ, ամրոցի հարավ-արևմտյան մասում ավտոճանապարհի լայնացման աշխատանքների ժամանակ բացվել է Հրվանդանի կողմից դեպի ձորն իջնող գաղտնուղի, թունելի ձևով, առանց ամրացման և արհեստական ծածկի (պատահարներից խուսափելու նպատակով այն ներկայումս փակված է)[21]։

Փոքրաթիվ են ամրոցի տարածքում պահպանված հուշարձանները։ Դրանք երկու եկեղեցիներ են, տարբեր ժամանակների խաչքարեր և տապանաքարեր։ Եկեղեցիներից մեկը, որ ավելի վաղ շրջանի է, գտնվում է ամրոցի տարածքի արևմտյան մասում, հարավային քարափից ընդամենը 6 մ հե-

---

[19] Տե՛ս Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփոխս, 1842. էջ 82, 83։ Գ. Երգնկյանց, նշվ. աշխ., էջ 3։

[20] Տե՛ս Գ. Երգնկյանց, նշվ. աշխ., էջ 3։

[21] Գաղտնուղու մասին տե՛ս Վ. Ավետյան, նշվ. աշխ., էջ 133—134։

ռավորության վրա։ Եկեղեցուց պահպանված են հյուսիսային պատը և աբսիդի մասը (նկ. 2, գծ. II, 1,2)։ Այն երկթեք կտուրով միանավ դահլիճ է՝ 690×430 սմ ընդհանուր չափերով։ Աղոթասրահը (380×282 սմ) արևելյան կողմում ավարտվում է կիսաշրջան աբսիդով, որի երկու կողմերում դրված սիմետրիկ դասավորված են 40×35 սմ չափեր ունեցող պատրհաններ։ Եկե-



Գծ. II

ղեցու տեղադրությունից երևում է, որ մուտքը եղել է արևմտյան կողմից։ Բեմի մասը լուսավորվում է 22×60 սմ չափերով պատուհանից։

Եկեղեցին կառուցված է տեղական բազալտի կոպտատաշ մանր քարերից՝ կապակցված կրաշաղախով։ Ստորին շարքերը և անկյունային մասերը համեմատաբար խոշոր, կիսամաքրատաշ քարերից են, որոնց մեծ մասը ներկայումս հանված է, և եկեղեցու մնացորդները փաստորեն հիմքերի հետ

կապվում են միայն պատի կես հաստությամբ։ Պատերը համեմատաբար բարակ են (70—75 սմ), որը և եկեղեցու ավերման պատճառներից մեկը կարող էր հանդիսանալ, եթե նկատի ունենանք, որ ծածկը եղել է կիսագլանաձև թաղից՝ առանց ենթաթաղային կամարների։ Թաղի ստորին շարքի մնացորդներ պահպանվել են հյուսիսային պատի վրա, որից երևում է, որ թաղը շարված է եղել երկայնական շարքերով մանր քարերից։ Եկեղեցին եղել է սվաղված. աբսիդի և հյուսիսային պատի վրա ներքուստ կան սվաղի մնացորդներ։ Կտուրի ծածկից ոչինչ չի պահպանվել։

Անցյալ դարի վերջին, ինչպես նշում է Մ. Բարխուդարյանը[22], եկեղեցին ամբողջական ձևով կանգուն է եղել։ Նրա շուրջը հին գերեզմանատուն է։ Հարավ-արևելյան մասում գտնվում է ոմն Ավետիս քահանայի տապանաքարը՝ Ոսէ (1198) թվագրումով։ Հավանական է, որ եկեղեցին կառուցվել է ավելի վաղ (համենայն դեպս, X դարից ոչ ուշ)։

Այս եկեղեցին, ի տարբերություն գյուղի ուշ շրջանում կառուցվածների, աղբյուրներում չի հիշվում որևէ անունով։ Ս. Ջալալյանցը գրում է, որ «՝ի կողմն Արևելից այսր դղեկի (այսինքն՝ Կայծոնի — Գ. Շ.) է սագաշէն եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի»[23]։ Հավանաբար այս հիշատակության վրա հիմնվելով մեր ժամանակի որոշ հրատարակություններում եկեղեցին կոչված է Ս. Սարգիս[24]։ Սակայն Ս. Ջալալյանցը այդտեղ նկատի ունի ամրոցի արևելյան կողմում, բարձր բլրի վրա ներկայումս էլ գոյություն ունեցող՝ Ս. Սարգիս անվամբ հայտնի մատուռը (նկատենք նաև, որ միանավ դահլիճը չի գտնվում Հրվանդանի արևելյան կողմում, որպեսզի առիթ տար այն նույնացնելու «սագաշէն եկեղեցու» հետ)։

Երկրորդ եկեղեցին, որ կոչվում է Ս. Գևորգ[25], տեղադրված է Հրվանդանի կենտրոնական մասում՝ գրեթե երկայնական առանցքի վրա և անհամեմատ լավ է պահպանված (գծ. II, 3—5)։ Այն պատկանում է Հայաստանում ուշ միջնադարում շատ տարածված երկթեք կտուրով եռանավ դահլիճների տիպին, որի դասական հորինվածքը շատ տարածված էր վաղ քրիստոնեական Հայաստանում (Աշտարակ, Ծիծեռնավանք և այլն)։ Ինչպես հայտնի է, այդ տիպը հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ նորից տարածում գտավ XVII դարից սկսած։ Ս. Գևորգը և նրան ժամանակակից եկեղեցիները, հիմնականում պահպանելով եռանավ դահլիճների դասական հորինվածքի հետ ունեցած ընդհանրության երերը, ստացել են նոր երանգ՝ հորինվածքային առանձին խնդիրների լուծման նոր արտահայտությամբ։ Հատակագծում այն ուղղանկյուն է՝ 1633×986 սմ չափերով։ Աբսիդը և ավանդատները արևելյան կողմից սահմանափակված են ընդհանուր պատով։ Աղոթասրահը (1085×812 սմ) երկու գույգ սյուներով բաժանված է երեք նավերի։ Կենտրոնական նավը կրկնակի անգամ լայն է եզրայիններից։ Եկեղեցին ունի երկու մուտք՝ հարավային և արևմտյան ճակատներից։ Աղոթասրահը լուսավորվում է հարավային ճակատի գույգ և արևմտյան ճակատի

---

22 Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 388, տողատակում։

23 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 83։

24 Տե՛ս «Ալավերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները», էջ 48։

25 Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 388, 389։ Գ. Երզնկյանց, նշվ. աշխ., էջ 2։ Նշված էջերում գյուղի կենտրոնական մասում գտնվող եկեղեցին էլ անվանված է Ս. Սարգիս։

կենտրոնական մեկ պատուհաններից։ Եկեղեցու նավերը, ինչպես նաև ավանդատները, ծածկված են կիսագլանաձև թաղերով։ Նավերի թաղերի տարածական կոշտությունը մեծացվում է ենթաթաղային զույգ կամարների միջոցով, որոնք թաղի հարթությունից դուրս են գալիս 16 սմ չափով։

Եկեղեցու պատերը ներսից շարված են բազալտե մանր կոպտատաշ, իսկ դրսից՝ խոշոր սրբատաշ քարերով։ Կամարները, որմնակամարները, սյուների միակտոր բները, ինչպես նաև աբսիդի, դռների և պատուհանների եզրերը նույնպես սրբատաշ բազալտից են։ Ճակատային հարթությունները պարզ են՝ առանց դեկորատիվ հնարքների։ Եկեղեցու քիվը պահպանվել է միայն երկայնական ճակատներում. այն դեղնականաչավուն ֆելզիտից է՝ պարզ գոգավոր տրամատով։ Մասամբ պահպանված է կտուրի կղմինդրե ծածկը։ Հարավային մուտքի առանցքով՝ մուտքից 1 մ բարձրության վրա գտնվող քարի վերին ձախակողմյան անկյունում նշված է եկեղեցու կառուցման թվականը՝ 1893[26]։ Մակագրությունների այլ հետքեր հուշարձանի վրա նկատելի չեն։ Ճիշտ նույնանման հատակագծային և ծավալա-տարածական հորինվածք ունի գյուղի կենտրոնական մասում գտնվող Ս. Սարգիս եկեղեցին՝ կառուցված Ս. Գևորգից մեկ տարի հետո (1894 թ.)[27]։

Կայծոն ամրոցի հետ ժամանակագրական կապի մեջ է ամրոցի տարածքի հյուսիս-արևելյան գոգավոր մասում գտնվող խաչարձան-մատուռը (գծ. II, 6, 7)՝ միմյանց կից երեք խաչքարեր, առնված հատակագծում ուղղանկյուն կառուցվածքի խորշի մեջ։ Խորշը արևմտյան կողմից է և վերևից ավարտվում է կիսաշրջանագծային կամարով։ Ի տարբերություն կառուցվածքի մյուս մասերի, որոնք մանր կոպտատաշ բազալտից են, կամարի ճակատային քարերը դեղնականաչավուն ֆելզիտից են։ Միջին խաչքարից վերև պատի մեջ թողնված է խորշ՝ 57×47 սմ չափերով, որի մեջ տեղադրված է հավասարաթև խաչ։ Խաչքարերն աչքի են ընկնում շքեղ քանդակազարդումներով, որոնք հորինվածքային առումով գտնվում են փոխադարձ կապի մեջ։ Երեք խաչքարերի համար էլ հորինվածքային հիմնակազմ մոտիվը ծաղկած խաչն է՝ զուգակցված բուսական տարրերի (նոան, խաղողի ողկույզների, ոստերի) հորինվածքների հետ։ Վերնամասում հյուսիսային կողմի և միջին խաչքարերը պսակված են հավասարաթև զույգ խաչերի և երկրաչափական ձևերի համադրական մոտիվով, իսկ հարավային կողմինը՝ ցանցկեն նրբին հյուսվածքով։ Քանդակներն աչքի են ընկնում հստակ գծագրությամբ, նկարվածքի պարզությամբ։ Ինչպես XII—XIII դդ. խաչքարերին ընդհանրապես, սրանց ևս հատուկ է ավարտուն և ամբողջական հորինվածքը, բուսական և երկրաչափական մոտիվների համադրումը։ Հարավային խաչքարի քիվի վերին գոտում կա արձանագրություն՝ Ս[ՈՒՐ]Բ Տ[Է]ՐՈՒՆԱԿԱՆՈՂ, որից և խաչքարը ստացել է Տերունական անունը (այն հայտնի է նաև Ս. Աստվածածին անվամբ)։ Խաչաթևերը եզերող կիսակլոր շրջանակից դուրս՝ անկյունային մասերում փո-

[26] Ս. Գևորգ եկեղեցին ամրոցի հետ փաստորեն ժամանակագրական կապի մեջ չէ. դրանց ընդհանրությունը միայն տարածքային առումով է։

[27] Գ. Երզնկյանցը նշում է, որ երկու եկեղեցիներն էլ կառուցված են 1894 թ. (տե՛ս Գ. Երզնկյանց, նշվ. աշխ., էջ 2)։ Ս. Սարգիս եկեղեցու հյուսիսային պատի մակագրության 1901 թվականը չի վերաբերում եկեղեցու կառուցմանը, քանի որ այդ եկեղեցին հիշվում է 1895 թ. հրատարակություններում։

բագրված է խաչքարի թվականը՝ ՈՀԱ (1222)։ Խաչքարերի հորինվածքային փոխադարձ կապից երևում է, որ դրանք նույն ժամանակի գործեր են։ Խաչքարերի առջևի մասում մեկ շարքում խոշոր բազալտե սալերից տապանաքարեր են, որոնցից մեկի վրա հստակորեն կարդացվում է ՎԱՆԵՆԻ անունը։ Հավանական է, որ այստեղ խաչքարերը ծառայել են որպես մահարձաններ կամ գերեզմանական կառուցվածքի մաս։ Խաչքարերի տեղադրությունից պարզ երևում է, որ դրանք իրենց նախնական վիճակով չեն և հնարավոր է, որ նախապես եղել են առանձին պատվանդանների վրա։ Խաչարձան-մատուռն առնված է մոտ 10×13 մ արտաքին չափերով ուղղանկյուն պարսպի մեջ, որի արևմտյան կողմից դուռն է։ Պարիսպն իր շարվածքով նույնանում է մատուռի հետ և նրանց միաժամանակ կառուցված լինելն աներկբա է։ Պարսպից ներս գտնվում են նաև XIX—XX դդ. մեծ թվով տապանաքարեր (Բեկթաշյան տոհմի շառավիղների անուններով)։

Հնարավոր է, որ ամրոցը, բացի վերը հիշվածներից, ունեցել է և այլ կառուցվածքներ՝ ջրամբար, բաղնիք, թերևս նաև պալատական շենք և այլն (ինչպես Հայաստանի միջնադարյան մյուս ամրոցները). սակայն դրանց հետքերը կամ դրանց վերաբերյալ պատմական, մատենագրական տեղեկություններ առայժմ հայտնի չեն։

Կայծոն ամրոցի հետ կապված կարևոր հարցերից մեկը նրա կառուցման ժամանակի պարզաբանումն է։

Ինչպես ասվեց, ամրոցի շինարարության ժամանակի վերաբերյալ տեղեկություն է հաղորդում պատմիչ Մխիթար Այրիվանեցին։ Եթե նկատի ունենանք, որ այդ մասին չեն պահպանվել վիմագրական կամ այլ բնույթի ուրիշ տվյալներ, ապա Մխիթար Այրիվանեցու հիշատակությունը այս հարցում պետք է լինի բացառիկ կարևոր սկզբնաղբյուր։

Հոլում Վասակը, որին վերագրվում է նշված ամրոցների շինարարությունը, ապրել է Բագրատունիների շրջանում, եղել է նրանց զորավարը և Բագի հովանավորը[28]։ Նրա նախնիները պատկանել են Կամսարականների տոհմին, որը քաղաքական ասպարեզից մոտ երկու դար հեռանալուց հետո՝ X դարի երկրորդ կեսին «իբրև կայծակ մը մոխրոց ներքևէ... վերայայտնեցաւ»[29] Պահլավունի տոհմանունով։ Բագրատունիների օրոք Պահլավունիները աչքի ընկնող ռազմաքաղաքական և տնտեսական-շինարարական գործունեություն են ծավալել։ Հոլում Վասակը՝ Վահրամ Պահլավունու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու և ուրիշների թվում տոհմին փառք բերող շառավիղներից է։

Աղբյուրներից իմացվում է, որ Վասակ Պահլավունին իր հարազատների հետ մասնակից է շատ շինարարությունների. կառուցել են «բազում եկեղեցիս եւ վանորայս»[30], «շինեալ բազումս, և զաւերեալսն նորոգեալ և այս ան-

---

[28] Հոլում Վասակի մասին տե՛ս նաև «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Առաջարան (կազմող՝ Կ. Կոստանյանց), Աղեքսանդրապոլ, 1910, էջ ԻԷ։ «Սմբատայ Սպարապետի տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 6—7։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Երևան, 1962, էջ 49։ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 8—9 և այլն։

[29] Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 23։

[30] И. А. Орбели, Надписи Мармашена, «Избранные труды», Ереван, 1963, էջ 442։

թիւս»[31]։ Սակայն նրա կյանքի և շինարարական գործունեության վերաբերյալ ժամանակագրական տվյալներ, որոնցից պարզ դառնար Կայծոնի և մյուս ամրոցների շինարարության ժամանակը, հայտնի չեն։

Կայծոն ամրոցի կառուցման ժամանակի հետ առնչվում է Վարդան պատմիչի տեղեկությունը Կայծոն ամրոցը որպես ժառանգություն Գուրգենին անցնելու մասին։ Ցավոք, պատմիչի հիշատակությունից հայտնի չի դառնում, թե ամրոցը Գուրգենին երբ է անցել՝ Աշոտ Ողորմածի մահվանից անմիջապես հետո, թե հետագայում[32]։ Սակայն որոշակի է, որ ամրոցը Գուրգենին անցել է նրա թագավոր դառնալուց ոչ ուշ։ Այդ մասին Հ. Մանանդյանը գրում է. «Սմբատ Բ-ի կրտսեր եղբայրը՝ Գուրգենը, հավատարիմ լինելով նրան՝ ժառանգում է նրա հրամանով 982 թվին Տաշիրը, Տավուշը, Կայանը և մերձակա շրջանները, ու հիմք է դնում Կորիկյան թագավորության»[33]։

Կյուրիկյան թագավորության հիմնադրման ժամանակը հեղինակների մոտ տատանվում է 969—982 թթ. միջև։ Մ. Չամչյանը, Հ. Մանանդյանը, Լեոն. Ե. Լալայանը, Աս. Շահնազարյանը և ուրիշներ ընդունում են 982 թ.[34]։ Բոլոր պարագաներում բավականաչափ հիմքեր կան կարծելու, որ ամենաուշը 982 թ. Գուրգենը եղել է թագավոր, և Կայծոնը այդ ժամանակ արդեն գոյություն է ունեցել։

Կարևոր պետք է համարել այդ թվականի համադրումը Կայծոն ամրոցը Հոլում Վասակի կողմից կառուցված լինելու վերաբերյալ Միխիթար Այրիվանեցու տեղեկության հետ։ Այդ համադրումը կատարելու համար անհրաժեշտ է իմանալ Հոլում Վասակի ծննդյան ժամանակը։ Դժբախտաբար, եթե Հոլում Վասակի մահվան թվականը (1020/1021) ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիշատակվում է մի շարք հեղինակների մոտ, ապա նրա ծննդյան թվականը չի ճշտված։ Մ. Հովհաննիսյանը, խոսելով Հոլում Վասակի անձնավորության մասին, նրա ապրած ժամանակը համարում է 950—1021 թթ.[35]։ Որ Հոլում Վասակը չէր կարող ծնված լինել 950-ին, դա երևում է նրանից, որ նրա հայրը՝ Գրիգոր Համազեն ծնվել է 941-ին[36], մայրը՝ տիկին Շուշանիկը, 952-ին[37]։ Նկատենք, որ Հոլում Վասակը երկրորդն էր Գրիգոր Համազեի որդի-

---

31 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 43։

32 Կա նաև կարծիք, որ Գուգարքը Գուրգենին է անցել Աշոտ Ողորմածի կենդանության ժամանակ (տե՛ս Ի. Հարությունյան, Սանահին, Թիֆլիս, 1898, էջ 7։ Ղ. Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923, էջ 10։ Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 126 և ուրիշներ)։

33 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Բ, Երևան, 1960, էջ 47։

34 Կյուրիկյան թագավորության հիմնադրման ժամանակի և հիմնադրի վերաբերյալ այլ կարծիք է հայտնվում «Հայ ժողովրդի պատմություն։ Սկզբից մինչև XVIII դարի վերջը» (Երևան, 1975) գրքում (տե՛ս էջ 451—452, 462)։

35 Տե՛ս Մ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 538։

36 Տե՛ս Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 892։ Ղ. Ալիշան, Շնորհալի ի պարագայ իւր, էջ 12։ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ ժ։ Ե. Քասունի, Աշոտ Ողորմած և իր շրջանի հայոց հոգևորական վիճակը, Բեյրութ, 1939, էջ 37։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 542։

37 Տե՛ս Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 37, 40։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1948, էջ 181։ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ ժե։

ների մեջ (ավագը Վահրամն էր՝ ծնված 967 թ.)[38], և 982 թվականին, երբ արդեն գոյություն է ունեցել Կայծոն ամրոցը, նա կլիներ 15 տարեկանից փոքր, ուստի, բնականաբար, չէր կարող հանդիսանալ «շինող... Կայենոյ և Կայծոնոյ»։

Սակայն պարզ է, որ Հոլում Վասակը կարևոր դեր է խաղացել Կայծոնի շինարարական կյանքում, այլապես նրա անունը չէր կապվի ամրոցի շինարարության հետ։ Հնարավոր է, որ նա աչքի ընկնող աշխատանքներ է կատարել արդեն գոյություն ունեցող ամրոցի պարսպապատերի ամրացման, նորոգման, թերևս նաև այլ կառուցվածքների շինարարության գծով, որոնք կարող էին շարունակվել և լրացվել հետագա տերերի կողմից, ինչպես այդ հիշվում է Գրիգոր Մագիստրոսի անվան հետ կապված[39]։ Կարելի է ասել, որ Կայծոն ամրոցը Հոլում Վասակի կողմից կառուցված լինելու վերաբերյալ Մխիթար Այրիվանեցու հիշատակությունը բավարար հիմք չի տալիս որոշելու ամրոցի կառուցման ճիշտ թվականը։ Փաստորեն ամրոցի գոյության ամենավաղ հավաստի թվագրումը համընկնում է Գուրգենի թագավոր դառնալու (իմա՛ Կյուրիկյան թագավորության հիմնադրման) ժամանակին։ Ավելի վաղ շրջանում ամրոցի գոյության վերաբերյալ առայժմ արժանահավատ տվյալներ կամ տեղեկություններ հայտնի չեն։

КРЕПОСТЬ КАЙЦОН

Г. С. ШАХКЯН

(Резюме)

Крепость Кайцон в с. Шнох Туманянского района АрмССР, одна из оборонительных опорных точек средневековой Армении, до сих пор не подвергалась специальному исследованию. Из оборонительных сооружений и архитектурных памятников, находившихся на территории крепости, до нас дошло очень немногое—остатки крепостных стен, церкви, хачкары. На основе анализа фактического материала в статье исследуются сохранившиеся сооружения, затрагиваются вопросы, связанные с оборонительной системой крепости, временем ее постройки.

---

[38] Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ ԺԶ։ Լեո, Երկերի ժողովածու, հատ. II, գիրք I, Երևան, 1967, էջ 642—643 և ուրիշներ։

[39] Տե՛ս Դ. Երզնկյան, նշվ. աշխ., էջ 3։